



«ՀԵՆԱՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԱՌՈՂՋ ԿՐԾՔԱԳԵՂՁ» ՆԱԽԱԳԻԾ

www.breast.am

ՔԱՅԼԵՐ ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ԲԻՈՊՍԻԱՅԻՑ ՀԵՏՈ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1. Բիոպսիայի կատարման օրը հարկավոր է փոքր-ինչ հանգստանալ, իսկ հաջորդող մի քանի օրերին՝ խուսափել ֆիզիկական ծանրաբեռնվածությունից:
2. Բիոպսիայի ավարտից հետո կարող է առաջանալ անհարմարավետության զգացում՝ հատկապես բիոպսիայի հատվածում, ինչպես նաև մաշկի տվյալ մասում կարող է նկատվել կապտություն, որը կանհետանա մի քանի օրից:
3. Ցավի և անհարմարավետության զգացումները վերացնելու նպատակով ցուցված է օգտագործել ոչ ստերոիդային հակաբորբոքային խմբի որևէ դեղորայք («Կետոնալ», «Նիմեսիլ», «Դեկսալգին» և այլն):
4. Առաջիկա մեկ շաբաթում չի թույլատրվում օգտագործել ասպիրին և ասպիրինի հիմքով այլ դեղորայք:
5. Բիոպսիայի ավարտից հետո անհարմարավետության, ցավի զգացումները և հետագա կապտությունը կանխելու նպատակով ցուցվում է սառցե պարկ տեղադրել բիոպսիայի հատվածում (մոտ 20 րոպե, 2-3 անգամ, 3 ժամը մեկ հաճախականությամբ):
6. Բիոպսիայից հետո 1-2 օր լոգանք/ցնցուղ ընդունել չի թույլատրվում:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԲԻՈՊՍԻԱՅԻՑ ՀԵՏՈՆ ՆԿԱՏՎՈՂ ՈՐՈՇ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

1. Եթե բիոպսիայի հատվածում արյունահոսություն է սկսվել, ապա պետք է.

- հանգիստ պառկել, հանել վիրակապը և ձեռքի երեք մատով 10 րոպե պինդ սեղմել բիոպսիայի հատվածը,
- եթե 10 րոպե սեղմելուց հետո արյունահոսությունը չի դադարում, ապա **ԴԻՄԵՆ ԲԺՇԿԻ**:

2. Բիոպսիայի հատվածի վարակում շատ հազվադեպ է լինում: Այդուհանդերձ, եթե տվյալ հատվածում առաջացել է այտուց, նկատվում են կարմրություն, ցավ, ջերմության բարձրացում, թարախային (դեղին, թանձր) արտադրություն, ապա **ԴԻՄԵՆ ԲԺՇԿԻ**:

3. Բիոպսիայից հետո կարող է տեղի ունենալ հազվադեպ պատահող բարդություն՝ հեմատոմա: Դա մակարդված արյան ժամանակավոր կուտակումն է բիոպսիայի հատվածում, որը շոշափելիս ցավոտ է՝ պինդ կոնսիստենցիայով: Նման ախտանիշի առկայության դեպքում **ԴԻՄԵՆ ԲԺՇԿԻ**:

ԲԻՈՊՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԿԼԻՆԵՆ 2-4 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ:

ՁԵՐ ԿՅԱՆՔԸ ՓՐԿԵԼՈՒՑ ԲԱՅԻ ՄԵՆՔ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ԴՐԱ ՈՐԱԿԸ

Ձեր բժիշկ Արթուր Ավետիսյան
avetisyandoc@gmail.com | +374 91 324525

«ԱՌՈՂՋ ԿՐԾՔԱԳԵՂՁ» նախագիծ

 **Breast.am**

Facebook՝ [Առողջ կրծքագեղձ/Breast health](#) • www.breast.am

Youtube՝ [BreastAM - Breast Health Project in Armenia](#)



«ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամ

Facebook՝ [Հենարան հիմնադրամ/Henaran Foundation](#)

info@henaran-fund.org

www.henaran-fund.org

ՀԵՆԱՐԱՆ